## ՍԱՐԳԻՍ Վ. ՇՆՈՐՀԱԼԻ

(Շար. տես յէջ 266)

ԸՍՏ մեր խոստման՝ ահա կու գանք ներկայ յօդուածիւս ցոյց տալ ընթերցողաց այն հատուածները, և քանի մը մանր տողերը, զորս Սարգիս քաղած է Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Պաւղոսի կամ Մատթէի մեկնութենէն, երբեմն գրեթէ բառ առ բառ և երբեմն ամբողջապէս։ Քաղուած հատուածներու բաղդատութեան համար աւելորդ կը համարինք Ոսկեբերանի յոյն բնագիրը գործածել. վասն զի, ինչպէս կանխապէս ըսինք, Սարգիս Ոսկեբերանի յունարէն[1] բնագրէն քաղած չէ զանոնք, այլ անոր հայերէն թարգմանութենէն՝ որ ամենահաւատարիմ է և գրեթէ բառ առ բառ նոյն իւր բնագրին հետ։ Ուրեմն, մեր ցոյց տալիք էջերը համաձայն են Սարգսի և Ոսկեբերանի այն տպագրութեանց, յորոց առաջինն լոյս տեսած է ի Կոստանդնուպոլիս. Թուին Հայոց 1193. միւսն ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, յամին 1862։ Արդ, ահաւասիկ վերոյիշեալ հատուածներու սկզբնաւորութիւնքն և էջերը։

Ա. — «Այգիս տնկեն և տունս...» և այլն։ Սրգ. Մեկն. կաթողիկեայ թղթոց. յորդ. Բ Յովհ. թղթոյն, էջ 825—30. գրեթէ ամբողջապէս օրինակութիւն։ «Ապարանս շինեն...», և այլն, Ոսկ. յորդ. Թ ճառին Փիլիպ. թղթոյն, էջ 451—8։ Բ. — «Զի եթէ ընաւ ամենեւին...», և այլն։ Սրգ. Մեկն. կաթ. թղ. յորդ. Բ. Յովհ. Ա թղթոյն, էջ 647—50. ամբողջապէս բառացի օրինակութիւն։ «Նա և եթէ չէր ինչ...», և այլն, Ոսկ. ԽԸ ճառ Եբր. թղթոյն, էջ 547—51։ Գ. — «Ապաշխարողին պարտ է...», և այլն։ Սրգ. Մեկն. կաթ. թղ. յորդ. Ե Յովհ. Ա թղթոյն, էջ 695. մաս մի միայն գրեթէ բառացի օրինակութիւն։ «Ապաշխարողին ոչ է պարտ...», և այլն, Ոսկ. ԼԱ ճառ Եբր. թղթոյն, էջ 563։ Դ. — «Քանզի ամենահնար...», և այլն։ Սրգ. կաթողիկոս թղ. յորդ Բ. Յովհ. Բ թղթոյն, էջ 774։ «Քանզի ամենահնար...», և այլն։ Ոսկ. յորդ. Զ ճառին Փիլիպ. թղթոյն, էջ 412։ «Եւ այն իսկ անհնարին...», և այլն։ Սրգ. Մեկն. կաթ. թղ. յորդ. Բ. Յովհ. Բ. թղթոյն, էջ 776։ «Եւ այն իսկ անհնարին...», և այլն։ Ոսկ, յորդ. Զ ճառին Փիլիպ. թղթոյն, էջ 415։ «Զայնմ տեղւոյ եւեթ...», և այլն։ Սարգիս Մեկն. կաթող. թղթ. յորդ. Բ Յովհ. Բ թղթոյն, էջ 776։ «Զայնմ տեղւոյ եւեթ...», և այլն։ Ոսկ. յորդ. Զ ճառին Փիլիպ. թղթոյն, էջ 415։ Ե. — «Որպէս Սոկրատէս...», և այլն։ Սրգ. Մեկն. կաթ. թղ. Թ ճառ Յակոբայ թղթոյն, էջ 174. իբրու հինգ տող։ «Քանզի նա... վաճառակուր...», և այլն։ Ոսկ. Մեկն. Մատթ. Բ. հտ. էջ 508։ Զ. — «Վիշտքն որ մօտ աստէն...», և այլն։ Սրգ. Մեկն. կթղկ. թղ. Բ ճառ Յակ. թղթոյն, էջ 22. իբրու հինգ տող։ «Այն ամենայն...», և այլն։ Ոսկ. Մեկն. Մատթ. Գ հտ. էջ 3։ Է. — «Զի անզգամին...», և այլն։ Սրգ. Մեկն. կթղկ. թղ. Ա ճառ Յակ. թղթոյն, էջ 13. իբրու հինգ տող, և աւելի ըստ իմաստից քան բառից նմանութեամբ։ «Եւ այնպիսի ասեն...», և այլն։ Ոսկ. Մեկն. Մատթ. Ա հտ. էջ 73։ Ը. — «Արդ ո՞ւր է Պղատոն...», և այլն։ Սրգ. Մեկն. կթղկ. թղ. Բ ճառ Պետր. Բ թղթոյն, էջ 538. իբրու ութ տող։ «Արդ ո՞ւր իցէ Պղատոնը...», և այլն։ Ոսկ. Մեկն. Մատթ. Բ հտ. էջ 508։ Թ. — «Զվարդապետի իմաստնոյ թեկն ածէ...», և այլն։ Սրգ. Մեկն. կթղկ. թղ. յորդ Ը ճառի Յակ. թղթոյն, էջ 135 և 149. իբրու երեք տող։ «Զվարդապետի թեկն ածէ...», և այլն։ Ոսկ. Մեկն. Մատթ. Ա հտ. էջ 360։ Ժ. — «Որք կանխեցին...», և այլն։ Սրգ. Մեկն. կթղկ. թղ. Ա ճառ Պետր. Ա թղթոյն, էջ 229—30. իբրու ութ տող։ «Որ ընդ եկեղեցւոյ...»,

---

1. Շատ հաւանական է որ Սարգիս նոյն իսկ յունարէն լեզուի անտեղեակ ըլլայ, վասն զի, ինչպէս որ գիտենք, իւր դարուն մէջ հազուագիւտ են յունագէտք ի մերայինս։

digitised by A.R.A.R.@

և այլն։ Ոսկ. Մեկն. Եսայեայ, էջ 1։ ԺԱ — «Եւ արդ զմեզ առ այսաւրիկ ոմն ոք խրատեսցէ...», և այլն։ Սրգ. կթղկ. թղ. յորդ. ԺԱ ճառի Ցակ. թղթոյն, էջ 218. գրեթէ յորդորակս ամբողջապէս ըստ իմաստից նմանութիւն է։ «Եւ արդ վասն մեր ոմն ոք աղօթեսցէ եղբարք...», և այլն։ Ոսկ. Լ ճառ Հռոմ. թղթոյն, էջ 418, տես նաև յէջն 748 Ը ճառ Եփես. թղթոյն։ — Այս նշանակեալ էջերս, ինչպէս բոլոր, բառ առ բառ օրինակութիւնք են, յորոց մին աՀաւասիկ դէմ առ դէմ կը դնեմք ի ստորև, իբրու օրինակ կամ գաղափար մի Սարգսի բանաքաղութեան ատենեանին։

ՍԱՐԳԻՍ

Այգիս անկեն և տունս պայծառս տախտակամածս շինեն..., և չզրեն ինչ և ոչ ի մեղս վարկանեն։ Եւ զայր վարդապետս՝ եթէ տեսանեն որ ի կերակուր ինչ մտաբերիցէ, և բարեքիկ Հանդերձիկ ագանիցէ, և զմի ոք արբանեակ ունիցի՝ որ զկարեւոր պէտս նորա վճարիցէ..., և ի կարեւորսն գոյաւոր իցէ, բամբասեն, երգիծանեն, մեծատուն է ասեն, զի՞արդ զայլս կարիցէ յանդիմանել։ Եւ արդարեւ մեծատուն եմք ի սակաւուն՝ քան նոքա ի բազմին, զայս և նոքա ակամայ իսկ խոստովանին։

Զի մեք թէպէտ և սակաւ ունիմք, մեծանամք. և նոքա թէպէտ և զամենայն ինչ աղխաղխեն. աղքատանան։ Մինչեւ յե՞րբ անմտանամք, աղէ ասասցէք. չիցե՞ն բաւական մեր չարիքն մեզ ի տանջանս. այլ և ի բամբասանացն յաւելումք մեզ վնասս։ Եթէ քո իսկ ինչ մի տուեալ է զոր ունի նա, ո՛չ ահա զվարձսն կորուսանես բամբասանօքն, և եթէ քո իսկ տուեալ է, ընդէ՞ր բամբասես. նախ քեզէն վկայէիր, եթէ զոր ունէրն աղքատաց եա և ապա եւտուր դու նմա, և արդ քեզէն բամբասես։ Եթէ գիտէիր եթէ անելանատացու է, զի՞ բնաւ եւտուր և դարձեալ բամբասես։ Իսկ եթէ այլոց տուեալ է, և դու զայդ ասնիցես, եւս անհնարին աղէտք են. զի չետուր ինչ, և բամբասես զայն ինչ զոր այլք բարի արարին։

Ո՛րչափ ինչ կարծիցես նոցա վարձս որք այդպիսի բանս ի քէն լսիցեն, և վասն Աստուծոյ տանիցին վշտաց։ Մարթ էր նոցա այգիս անկել, ի գինեվաճառս Հատանել, ի գնողս Հարկանել, թէպէտ և ի նախնեացն ինչ չունէին, այնու իսկ կարէին իւրոյ զքեզ ճարտարանալ։ Քանզի լսեմ իսկ ի բազմաց, զի զայս ասեն յանդգնութեամբ և թշնամանօք, եթէ նորա նախահաւն և հայրն զի՞նչ էին, զի նա այնպիսի շքեղ և առանց կարեաց և անհոգութեամբ ի յեցի իւրում նստի։ Արդ աղէ ասա, մե՞րկ պարտ էր շրջել այնպիսւոյ առն՝ որ ընդ օրէնս Աստուծոյ էր սնեալ։ Դու՝ որ այդպիսի Հաւատոյս պա-

ՈՍԿԵԲԵՐԱՆ

Ապարանս շինեն, և գեօղս և ագարակս գնեն, և չՀամարին թէ ունին ինչ. և եթէ ի քաՀանայից ոք Հանդերձիկ ինչ բարեքիկ արկանիցէ, և ի կարեւոր կերակուրսն գոյաւոր իցէ, և կամ թէ սպասաւոր զոք ունիցի, զի մի Հարկ լինիցի զանձին շուք արկանել, մեծութիւն զերան Հաշուեն։ Եւ արդարեւ իսկ մեծատունք են այնու, և նոքա ակամայ իսկ խոստանան։

Մեք թէպէտ և սակաւ ինչ ունիմք, մեծանամք. և նոքա ,թէպէտ և զամենայն ինչ աղխաղխիցեն, աղքատանան։ Մինչեւ յե՞րբ անմիտք իցեմք. չիցե՞ն բաւական իսկ մեր գործքն մեզ ի տանջանս. այլ և ի բամբասանացն յաւելումք մեզ վնաս։ Եթէ քո իսկ տուեալ իցէ զոր ունիցին, զվարձս տրոցն կորուսանես բամբասանօքն. և եթէ դու իսկ ետուր, ընդէ՞ր բամբասիցես. նախ քեզէն իսկ վկայէիր, թէ զոր ունէր աղքատաց եա, և արդ քեզէ՞ն բամբասես։ Զէր պարտ տալ, եթէ գիտէիր և բամբասելոց էիր։ Իսկ եթէ այլոց եւս տուեալ իցէ, և դու զայդ ասիցես, եւս անհնարին աղէտք են. զի չետուր ինչ, և բամբասես զայն ինչ՝ զոր այլք բարի արարին։

Ո՛րչափ ինչ կարծիցես նոցա վարձս որ զայդպիսի բանս ի քէն լսիցեն, և վասն Աստուծոյ տանիցին վշտացն։ Զի՞արդ և որո՞վ օրինակաւ։ Մարթ էր և նոցա ի գինեվաճառս Հատանել, ի գնողս Հարկանել, թէպէտ և ի նախնեացն ինչ չունէին։ Քանզի և լսեմ իսկ ի բազմաց, զայն ասեն յանդգնութեամբ. յորժամ ասիցեմք եթէ այս անուն աղքատ է, ասեն՝ կարէր մեծանալ թէ կամէր. դարձեալ թշնամանօք, եթէ նախնիք նորա՝ Հաւն և Հայրն զի՞նչ էին, զի նա այնպիսի Հանդերձս արկանէ։ Արդ աղէ ասա, մե՞րկ տայիր շրջել դու՝ որ այդչափ Հաւատոյս պաՀանջես. զգոյշ լեր՝ գուցէ զանձնէ չարախօ-

digitised by A.R.A.R.@

### ՍԱՐԳԻՍ

հանդերձս ի նմանէ, զգոյշ լեր՝ գուցէ զանձնէ չարախօսիցես զայդ ասելով. այլ լուր խրատուն Քրիստոսի, «Մի՛ դատիք, ասէ, զի մի՛ դատիցիք». մարթ էր նոցա որպէս և քեզ ի վաճառս հատանել և ի շահս հարկանել, և չլինէին չքաւորք։ Եւ արդ, ասեն, չշահեցի՞ ինչ շահս։ Զո՞ր շահս աղէ ասա. կերպասեղէն հանդերձս ունիցին, եթէ ստացուածոց բազմութիւնս, եթէ ձիո՞ք պերճանայցեն, եթէ ի շինուածս հարկանիցին կամ այգիս տնկիցեն։ Եթէ այնպիսիք ոմանք էին՝ զայնպիսին և ես բամբասեմ և չխնայեմ ինչ. այլ և չհամարիմ բնաւ վարդապետութեան արժանի։ Զիա՞րդ կարիցէ այնպիսին զայլս խրատել, որ զիւր անձն չկարիցէ խրատել։

Իսկ եթէ ի կարևոր պէտսն գոյաւոր է, այն զի՞նչ վնաս իցէ. մինթէ զվայրօ՞ք ինչ գալ և մուրանա՞լ պարտ էր վարդապետին, և չիցե՞ն իսկ այն աշակերտիդ քեզ նախատինք։ Եթէ մարմնաւոր հայրն քո զայս առնէր, ամօթ վարկանէիր զիրան. ապա եթէ հոգևոր հայրն յայն գայցէ, չամաչե՞ս, չկորանայցե՞ս։ Զլուա՞ր գրոց՝ որ ասէ. «Անարգանք հօր նախատինք որդւոյ»։ Մի թէ ի սովո՞յ պարտ էր մեռանել այնպիսւոյ առնն ի մէջ մարդկան. ոչ զայն ասէ ասեմք եթէ չէ պարտ հանդերձ մի և կերակուր ունել վարդապետին։

Այլ գրեալ է. «Մի՛ ստանայք ոսկի, և մի՛ արծաթ, մի՛ երկուս պարեգօտս, և մի՛ պղինձ ի գօտիս ձեր, և մի՛ գաւազան». և դոքա երիս և չորս հանդերձս ունին, և մահիճս զարդարեալս։ Արդ ընդ այնոսիկ է մեծապէս հառաչել, զի զայսոսիկ ասեն և ո՛չ առնեն. որ և ինքեանք գերանաւ կուրացեալք են և ո՛չ զգան, և զայլոց շիւղն արտաքագոյն տեսանեն և դատն դատախազ լինին։

Աղէ ասա, քեզ ընդէ՞ր չառիցես զայդ. Մի թէ վարդապետացն միայն կարգեալ են այդպիսի հրամանք։ Իսկ յորժամ Պաւղոս ասէ. «Ունիմք կերակուր և հանդերձ և այնու շատասցուք», առ վարդապե՞տսն միայն ասաց։ Եւ ոչ ուրեք. այլ առ ամենայն մարդիկ. և յայտ ի վերագոյն բանիցն է. և զի՞նչ ասէ վերագոյնն. «Շահ մեծ աստուածպաշտութիւնն է, բաւականութեամբ հանդերձ. զի ոչ ինչ բերաք յաշխարհս, յայտ է՝ թէ և ոչ տանել ինչ կարեմք». և փաղփաղակէ ի նոյն յարէ, եթէ «Ունիմք կերակուր և հանդերձ, այնու շատասցուք. իսկ

### ՈՍԿԵԲԵՐԱՆ

ոիցես. այլ լուր խրատուն Քրիստոսի, «Մի՛ դատիք, ասէ, զի մի դատիցիք». մարթ էր նոցա ի վաճառս հատանել և ի շահս հարկանել, և չլինէին չքաւորք։ Եւ արդ, ասեն, չշահեցի՞ ինչ շահս։ Զի՞նչ շահս. հանդերձս կերպասեղէնս, եթէ ստացուածոց բազմութիւն՝ որ այսր անդր զռամիկն ի հրապարակսն խաղիցեն. և եթէ ձիո՞վ պերճանայցէ, և ի շինուածս հատանիցէ։ Զայնպիսին և ես բամբասեմ և չխնայեմ ինչ. այլ և չհամարիմ իսկ բնաւ արժանի քահանայութեան։ Զիա՞րդ կարիցէ այնպիսին զայլս խրատել, զբաղեալ յաշխարհորդսն, որ զիւր անձն չկարիցէ խրատել։

Իսկ եթէ ի կարևոր պէտս կերակրոյն գոյաւոր է, այն զի՞նչ վնաս իցէ. մի թէ զվայրօ՞ք ինչ գալ և մուրանա՞լ պարտ իցէ. և չիցե՞ն իսկ այն քեզ աշակերտիդ ամօթանք։ Եթէ մարմնաւոր հայր զայն առնէր, ամօթ համարէիր զիրան. իսկ եթէ հոգևորն յայն գայցէ, չամաչիցե՞ս, չկորանայցե՞ս։ «Անարգանք հօր, ասէ, նախատինք են որդւոյ»։ Մի թէ ի սովո՞յ ինչ պարտ իցէ մեռանել. այլ չէ այն աստուածպաշտ ինչ մարդկան, և ոչ Աստուած ընդ այն կամի։

Այլ փաղփաղակի ի ձայնարկէ հառաչանին։ Գրեալ է, ասեն. «Մի՛ ստանայք ոսկի, և մի արծաթ, և մի՛ երկուս պարեգօտս, և մի՛ պղինձ ի գօտիս ձեր, և մի՛ գաւազան». և դոքա երիս և չորս հանդերձս ունին, և մահիճս զարդարեալ։ Եւ ընդ այն իսկ է զառանձապէս յոգւոց հանել. և թէ չպատկառէի՝ զլալ իսկ հարկանէի։ Ընդ է՞ր. զի վասն այլոյ շիւղոյ առաջ պահանջողք են, և զիւրեանց գերանն յական բնաւ ամենևին չզգան։

Աղէ ասա, քեզ ընդ է՞ր չառիցես զայդ։ Զի վարդապետացն միայն, ասէ, կարգեալ են այդպիսի հրամանք։ Իսկ յորժամ Պաւղոս ասիցէ. «Ունիմք կերակուր և հանդերձս և այնու շատասցուք», առ վարդապե՞տսն միայն ասիցէ։ Եւ ոչ ուրեք. այլ առ ամենայն մարդիկ. և յայտ ի վերագոյն բանէն է. և զի՞նչ ասիցէ. «Շահ մեծ աստուածպաշտութիւն է, բաւականութեամբն հանդերձ. զի ոչ ինչ բերաք յաշխարհս, յայտ է՝ թէ և ոչ տանել ինչ կարեմք». և փաղփաղակէ ի նոյն յարէ. եթէ «Ունիմք հանդերձս և կերակուրս, և այնու շատասցուք.

digitised by A.R.A.R.@

որ կամին մեծանալ, անկանին ի փորձութիւնս և յորոգայթս վնասակարս »:

Տեսանե՞ս, զի առ ամենեսեան է ասացեալ բանն: Իսկ յորժամ ասիցէ, «Մարմնոյ խնամ մի՛ տանիք ի ցանկութիւնս», ո՞չ ապաքէն ընդ ամենեսեան հասարակ խօսի և ո՛չ ընդ վարդապետս միայն:

Զայսոսիկ ինձ այժմ հարկ եղեւ ասել, ոչ զի զվարդապետսն ազատեցից ի մեղադրանաց, այլ ի ձեզ խնայեմ: Նոքա թէ արդարութեամբ զայն լսիցեն, որպէս համբաւեալք իբրեւ զընչասէրս, չվնասին ինչ ի ձէնջ: Այլ թէ ասիցէք և թէ չասիցէք, անդ դատաւորին տալոց են համարս: Ապա եթէ սուտ իցեն բանքն, նոցա շահ մեծ է ի զրպարտութենէն, և դուք անձանց վնաս մեծ տանէք չարախօսութեամբքն: Եւ ոչ այնու միայն վճարիցի. այլ եթէ արդար է և եթէ սուտ՝ որով բամբասիցէքն, ձեզ վնաս է: Ընդէ՞ր. զի թէպէտ և արդար է ասացեալն, դուք ի պատժոց չապրիք, զի զվարդապետսն դատիք, և զկարգն եղծանէք. զի եթէ զեղբայրն չէ պարտ դատել, ո՞րչափ եւս առաւել զվարդապետսն. ապա եթէ սուտ եւս իցէ, այնուհետեւ անհնարին տանջանք և պատիժք են. զի ընդ ամենայն դատարկ բանից համարս տալ հաստանէ. տեսանե՞ս զի ամենեւին վասն ձեր ջանամ և հնարիմ, և ոչ վասն նոցա, զի դուք ի պատժոց ապրիցիք:

Բայց այսուհետեւ զայն եւս քննեսցուք: Ասաց Քրիստոս. «Մի՛ ստանայք ոսկի, մի՛ արծաթ, մի՛ երկուս պարեգօտս, մի՛ կօշիկս, մի՛ գօտի». աղէ ասա, Պետրոս ջերմ սիրելին Քրիստոսի՝ ա՞նց ինչ զհրամանօքն. թուի ինձ եթէ չէանց բնաւ. զի գօտի ածէր և հանդերձ զգենոյր, և օդ յոտսն: Լուր հրեշտակին որ ասէր ցնա. «Ած զգօտի քո և արկ զհողաթափսն յոտսդ», թէպէտ և ո՛չ այնչափ պէտք էին օդոյ ոտից յայնժամ, քանզի գարուն էր, մարթ էր և բոկ իսկ շրջել, սակայն ունէր, քանզի կարեւոր պէտք օդոյ՝ ի ձմերայնի են: Իսկ Պաւղոս յորժամ առ Տիմոթէոսն գրեաց, եթէ փութասջիր յառաջ քան զձմեռն գալ առ իս, և պատուիրէր՝ թէ «Զփիլոնն՝ զոր թողի առ Կարպոսի, յորժամ գայցես՝ բերջիր. ահաւասիկ փիլոն աստ. և չկարէ ոք ասել՝ եթէ այլ ինչ չունէր զոր արկանէր. և եթէ բնաւ չարկանէր փիլոն, աւելորդ էր հրաման տալ՝ եթէ բերջիր,



Իսկ որք կամինն մեծանալ, անկանին ի փորձութիւնս և յորոգայթս և ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս »:

Տեսանե՞ս, զի առ ամենեսին է ասացեալ բանն: Իսկ արդ յորժամ ասիցէ, եթէ «Մարմնոյ՝ խնամ մի՛ տանիք ի ցանկութիւնս», ո՞չ ապաքէն ընդ ամենեսին առ հասարակ խօսի.

Եւ ինձ այժմ հարկ եղեւ ասել, ոչ զի զքահանայսն ազատել ի բամբասանաց կամիցիմ, այլ ի ձեզ խնայեմ: Նոքա թէ արդարութեամբ և առանց պատճառանաց զայն լսիցեն, որպէս համբաւեալք իբրեւ զընչասէրս, չվնասին ինչ ի ձէնջ: Այլ թէ ասիցէք և թէ չասիցէք, անդ դատաւորին տալոց են համարս. և չվնասեն ինչ նոցա ձեր բանքն: Ապա եթէ սուտ իցեն ձեր բանքն, նոցա և օգուտ ի զրպարտութենէն լինիցի. և դուք անձանց վնաս տանէք չարախօսութեամբքն: Եւ ոչ այնու միայն վճարեսցի. այլ եթէ արդար իցէ և եթէ սուտ՝ որով բամբասիցէքն, ձեզ վնաս իցէ: Ընդ էր. այլ թէպէտ և արդար իցէ, դուք ի պատժէ չապրիք, զի զվարդապետսն դատիք, և զկարգն եղծանէք. զի թէ զեղբայր չիցէ պարտ դատել, ո՞րչափ եւս առաւել զվարդապետս. ապա թէ սուտ եւս իցէ, այնուհետեւ անհնարին տանջանք և պատիժք են, քանզի ընդ ամենայն դատարկ բանից հաստանէ համարս տալ Աստուծոյ: Որպէս զի ամենեւին վասն ձեր ջանամք և հնարիմք:

Բայց ի մէնջ այսուհետեւ զայն եւս քննեսցուք: Ասաց Քրիստոս՝ թէ «Մի՛ ստանայք ոսկի և մի՛ արծաթ, մի՛ երկուս պարեգօտս, մի՛ կօշիկս, մի՛ գօտի, (մի՛ ցուպ)». արդ աղէ ասա, Պետրոս ա՞նց ինչ զհրամանօքն. թուի ինձ թէ չանց. զգօտին ածէր և հանդերձ ագանէր և օդ յոտսն: Լուր հրեշտակին որ ասէր ցնա. «Ած զգօտիդ ընդ մէջ, և արկ զհողաթափս յոտս քո». թէպէտ և ոչ այնչափ միայն պէտք էին օդոյ ոտից, քանզի (յայնմ ժամանակի) մարթի և բոկ իսկ շրջել, և կարեւոր պէտք օդոյ՝ ձմերայնի են, սակայն ունէր: Իսկ Պաւղոս յորժամ առ Տիմոթէոսն գրեաց, թէ փութասջիր յառաջ քան զձմեռն գալ առ իս, և պատուիրէ, թէ «Զփիլոնն՝ զոր թողի առ Կարպոսի, յորժամ գայցես՝ բերջիր, և զգիրսն՝ մանաւանդ զմատեանսն» ահաւասիկ փիլոն աստ. և չկարէ ոք ասել՝ թէ այլ չունէր, զոր արկանիցէ. և եթէ բնաւ չարկանէր փիլոն, աւելորդ էր

digitised by A.R.A.R.@

## ՍԱՐԳԻՍ

և եթէ չէր մարթ չարկանել, յայտ է թէ և այլ գոյր։ Իսկ յորժամ զերկեամն իւրով վարձու կալաւ վանս, և անա վարձն արծաթ էր. մի թէ անսաստեա՞ց Քրիստոսի հրամանացն՝ անօթն ընտիր, որ Քրիստոսի կենդանութեամբն կեայր. զորմէ և Քրիստոս վկայէր և Անօթ ընտիր զնա անուանէր։

Պարտ էր ինձ զայսպիսի խնդիրս ի ձեզ ապաստան առնել, և ինձ ոչ լուծանել, այլ ընդ այնր զձեզ բամբասել, զի զգրոց ընթերցուածոց ծոյլք էք, և այս ամենայն անտի ծնանին. և վասն այնորիկ յայլոց մեղաց դառն դատաւորք եմք, և անմարթի դահիճք, և վասն մերոցն չունիմք ինչ փոյթ յանձին. և այն անտի է՝ զի զգիրս ոչ քննեմք, և աստուածեղէն օրինօքն չեմք խրատեալք. և արդ այժմ զայնր վրէժս պարտ էր պահանջել ի ձէնջ։ Բայց սակայն զի մի աւելի քան զչափն տրտմեցուցից զձեզ, զբերլոցն լուծումն արասցուք որով դուքն գայթակղիք։

Ոչ եթէ ընդ հակառակս ինչ ելին առաքեալքն տէրունական պատուիրանացն, քաւ լիցի. ես ոչ ասեմ զայս՝ այլ կարի յոյժ երթային զհետ պատուիրանացն Քրիստոսի. զի այն պատուէրք առ ժամանակ մի էին և ոչ հանապազորդք։ Եւ զայս ոչ յինէն ինչ ասեմ, այլ յաստուածեղէն գրոց։ Լուր Ղուկասու աւետարանչի. ասաց տէր մեր, ասէ, ցաշակերտսն. «Յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի և մախաղի և գօտւոյ և կօշկաց, մի թէ պակասեցա՞յք իմիք. ասեն, ոչ։ Ասէ ցնոսա՝ այսուհետև առասցարուք»։ Ապա թէ ոչ՝ այս զի՞նչ օգուտ էր մի միայն պարեգօտ ունել. և եթէ զայն լուանալ հատանէր, մե՞րկ ինչ պարտ էր նստել ի տան և կամ ծանակ ի հրապարակս շրջել, եթէ այնպիսի պէտք ոչ էին, բառ որում ասացի։ Զմտաւ ած որպիսի՞ ոք էր Պաւղոս, զի վասն յաղթութիւն ածելոյ՝ ո՞րչափ աշխարհս հատանէր անցանէր, վասն հանդերձի կարօտութեան ի տա՞ն ինչ պարտ էր նստել և յայնպիսի շահից խափանել։ Իսկ եթէ սառամանիք ուրեք դիպէր կամ բուք ձմերայնոյ, զի՞նչ պարտ էր նմա առնել. մերկ ի տա՞ն նստել և կամ ի ճանապարհի ի սառնամանեաց մեռանել մարմինն, հաշել և մաշել և (մեռանել իսկ)։ Զի ոչ եթէ պղնձի մարմինս կազմեալ էր նոցա, բայց նմին իսկ «Տուաւ ինձ, ասէ, խայթ մարմնոյ, հրեշտակ սատանայ, կափել զիս»։ Եւ աշակերտին

## ՈՍԿԵԲԵՐԱՆ

հրաման տալ՝ թէ բերջիր. և թէ չէր մարթ՝ թէ չարկանէր, յայտ է՝ թէ և այլ գոյր։ Իսկ յորժամ զերկեամն ողջոյն իւրով վարձու կալաւ վանս, մի թէ անսաստեա՞ց ինչ Քրիստոսի՝ անօթն ընտիր, որ ասէր՝ թէ «կենդանի եմ, ոչ այսուհետև ես,՝ այլ կենդանի է յիս Քրիստոս»։ զորմէ Քրիստոսն վկայէր՝ թէ «Անօթ ընտիր է ինձ սա»։

Պարտ էր զայս խնդիր ձեզ թողուլ, և չատանել ինչ լուծումն. և ընդ այնր առնուլ ի ձէնջ վրէժս, զի զգրոցն ընթերցուածոց ծոյլ էք, և այս ամենայն անտի ծնանի. և վասն այնորիկ յայլոց մեղաց աղխտարար ատեարք եմք և դառն դահիճք, և վասն մերոցն չունիմք փոյթ յանձին. և այն անտի է՝ զի զգիրս չգիտեմք, և աստուածեղէն օրինօքն չխրատիմք. և արդ պարտ էր զայնր վրէժ առնուլ ի ձէնջ։ Բայց սակայն թէ և այնպէս լինիցի, և տրտմիցիք ընդ չառնուլն, ջանամք զի առնուցուք, և բարիոք առնուցուք։

Ոչ եթէ ընդ հակառակ ինչ ելին, քաւ լիցի. այլ կարի իսկ յոյժ երթային զհետ պատուիրանացն Քրիստոսի. զի այն պատուէրք առ ժամանակ մի էին և ոչ հանապազորդք։ Եւ զայս ոչ ի կարծեաց ինչ ասեմ, այլ յաստուածեղէն գրոց։ Զիա՞րդ։ Ղուկաս ասէ՝ թէ ասաց տէր ցաշակերտսն. «Յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի և մախաղի և գօտւոյ և կօշկաց, մի թէ պակասեա՞ց ինչ ձեզ. ասեն, ոչ։ Ասէ ցնոսա՝ այսուհետև առասցարուք»։ Ապա թէ ոչ՝ զի՞նչ օգուտ էր մի միայն պարեգօտ ունել. և եթէ զայն լուանալ պիտոյ էր, մե՞րկ ինչ պարտ էր նստել, կամ մերկ շրջել, եթէ այնպէս ինչ պէտք ոչ էին։ Զմտաւ ած որպիսի՞ ոք էր Պաւղոս, վասն յաղթութեան ածելոյ՝ ո՞րչափ աշխարհս հատանէր անցանէր, վասն հանդերձի կարօտութեան ի տա՞ն ինչ պարտ էր նստել և յայնպիսի շահից խափանել։ Իսկ եթէ պարզ ուրեք պնդէր կամ բուքք և անձրևածք լինէին, բրտանա՞լ ինչ պարտ էր, կամ մերկ դատարկ ի տա՞ն նստել. եթէ ցուրտ մաշէր զմարմինն, հաշել մաշե՞լ ինչ պարտ էր և չխօսել։ Եւ զի ոչ անդամանդեայ մարմինս ինչ կազմեալ նոցա, լուր սմին՝ զի գրէ առ Տիմոթէոս. «Այլ և սակաւիկ մի գինեաւ խառնեսջիր վասն ստամոքսիդ և ստէպ ստէպ հիւանդութեանց»։

digitised by A.R.A.R.@

### ՍԱՐԳԻՍ

իւրում գրէր. «Սակաւիկ մի գինի խառնեսջիր վասն ստամոքսի և ստէպ ստէպ հիւանդութեանցդ»: Տես քեզ որպիսի կարեօքն էին:

Եւ արդ զի՞նչ. նուաղե՞լ և մեռանե՞լ ինչ պարտ էր: Եւ ոչ ուրեք: Իսկ էր վասն այնժամ զայն հրամայեաց: Զզօրութիւնն իւր կամեցաւ ցուցանել, եթէ առ յապա կամէր այնպիսի առնել, այլ չարար: Իսկ ընդէ՞ր չարար. զի առաքեա քան զԻսրայէլացիսն եւս զարմանալիք էին, որոց ոչ կօշիկքն մաշեցան և ոչ հանդերձքն հնացան. և այն յանապատին եւս՝ ուր արեգակն ջերմութեամբ իւրով և զքարինսն փշրել կարէր: Եւ սոցա էր վասն զայն ոչ արար. քո աղագաւ. որպէսզի դու վարձս առցես զպակասութիւն նոցա լնլովն: Ապա եթէ ոչ, որ ապերախտին Իսրայէլի զայն եւս պարգեւեաց, և ջուր ի վիմէ ետ, և հաց յերկնից, առաքելոցն և նմանից նոցա՝ էր վասն արգելոյր և ոչ տայր. եթէ ոչ ի քո պատճառս, որպէս և ասացի: Որ զամենայն ինչ զիւրեանց թողին և զհետ նորա գնացին, էր վասն մուրողութեամբ արձակեաց զնոսա յամենայն դրունս. որպէս զի աշակերտքն շահեսցին նոցա կարօտութեամբն:

Եւ այս Աստուծոյ անչափ մարդասիրութեանն էր, ախորժել զիւր զաշակերտսն աղքատս առնել յայնժամ և այժմ, զի դու փոքր մի ոգի առնուցուս. զի թէ զնոսա չէր արարեալ կարօտս, յոյժ զարմանալիք լինէին, առաւել փառաւորք՝ հրեշտակական կեանս կեալ ի վերայ երկրի. այլ քո փրկութիւնն վրիպէր ի քէն: Չկամեցաւ առնել զնոսա զարմանալիս՝ այլ նուազունս, զի դու փրկութեան հասանիցես: Զի ոչ մեծարանք են վարդապետին առնուլ ինչ յաշակերտացն՝ այլ չառնուլն. զի առնուլ առաւել անպատուութեան է նշանակ քան զչառնուլ. բայց աշակերտն ինչ ոչ օգտի, այլ ի դերեւ ելանէ ի պտղոյն:

Տեսանե՞ս զիմաստութիւն մարդասիրին Աստուծոյ. զի զոր օրինակ ինքն ոչ փառս անձին իւրում խնդրեաց, և ոչ զշիւրութիւն, այլ զանարգանս վասն քո և զանփառութիւն. նոյնպէս և զվարդապետսն որոց արժան էր մեծարոյս լինել, ախորժեաց վասն քո առնել նուաստանալ, զի դու շահեսցիս, զի դու մեծանայցես և գոյաւոր հոգեւորօքն լինիցիս: Վասն այնորիկ նա չքաւորի մարմնաւորօքս, զի դու

### ՈՍԿԵԲԵՐԱՆ

Եւ արդ զի՞նչ. նուաղե՞լ և մեռանե՞լ ինչ պարտ էր: Եւ ոչ ուրեք: Իսկ էր վասն յայնժամ զայն հրամայեաց: Զզօրութիւն իւր կամեցաւ ցուցանել, թէ առ յապա կարէր այնպիսի ինչ առնել, այլ չարար: Իսկ ընդէ՞ր չարար. զի սոքա եւս առաւել քան զԻսրայէլացիսն էին զարմանալիք, որոց ոչ կօշիկքն մաշեցան և ոչ հանդերձքն լեշկեցան. և այն զի յանապատի եւս շրջէին, ուր եւս ջերմագոյն տապացուցանէին ճառագայթք արեգականն, և զքարինս եւս փշրել կարէին: Եւ զայն էր վասն արար. քո աղագաւ. քանզի չէիր ողջանալոց, այլ եւս քան զեւս վիրաւորէիր, զդեղոյն պատճառս շնորհեաց քեզ: Եւ այս անտի յայտ է. մի թէ կարէ՞ր ինքն իսկ կերակրել. որ քեզ դիմադարձիդ ետ, ո՞չ ապաքէն եւս առաւել Պաւղոսի տայր. որ Իսրայէլացւոցն ետ տրտնջողաց, կռապաշտից, ո՞չ ապաքէն և Պետրոսի տայր, որ զամենայն վատնեաց, զբնաւ վասն նորա եթող. որ ժանտից մարդոց ետ ուտել ինչս, ո՞չ ապաքէն եւս առաւել Յովհաննու շնորհէր, որ զհայրն եւս վասն նորա եթող. բայց չկամեցաւ, այլ քեւ կերակրէ զնոսա, զի դու օրհնեսցիս:

Եւ տես զանչափ մարդասիրութիւնն. ախորժեաց զիւր աշակերտսն չքաւորս առնել, զի դու փոքր մի ոգի առնուցուս. զի թէ զնոսա չէր արարեալ կարօտս, յոյժ զարմանալիք լինէին, առաւել փառաւորագոյնք, այլ քո փրկութիւնն վրիպէր ի քէն: Չկամեցաւ առնել զնոսա զարմանալիս, զի դու ապրիցիս, այլ թոյլ ետ նուազել նոցա, զի դու փրկութեան հասանիցես: Զի ոչ նոյնպէս մեծարանաց ինչ է վարդապետին առնուլ յաշակերտէն և չառնուլ, այլ այն պատուի՝ որ չառնուցու. բայց աշակերտն ինչ ոչ օգտի, այլ ի դերեւ ելանէ ի պտղոյն:

Տեսանե՞ս զիմաստութիւն մարդասիրին Աստուծոյ. զոր օրինակ ինքն ոչ միայն զիւր փառսն չխնդրեաց, և ոչ զանձին ինչ զիտեաց, այլ որ ի փառսն էր՝ յանձին կալաւ անարգել վասն քո. նոյնպէս և զվարդապետսն՝ որոց մարթէր մեծարոյ լինել, ախորժեաց վասն քո առնել քամահելիս, զի դու շահիցիս, զի դու մեծանայցես, և գոյաւոր հոգեւորօքն լինիցիս: Վասն այնորիկ նա չքաւորէ մարմնաւորօքս, զի դու

digitised by A.R.A.R.@

փարթամացիս հոգեւորօքն. կարող էր առնել զնոսա անկարօտս. եցոյց եթէ վասն քո թոյլ ետ նոցա նուաղանալ, և այս ահա յայտնի ցուցաւ ասացելովքս:

Զայս ամենայն իմացեալ՝ մի՛ ի բամբասանս, այլ ի բարութիւնս դարձցուք. մի՛ զայլոց չարիս քննեսցուք, այլ զմեր մեղսն ածցուք զմտաւ, զայլոց զուղղութիւնս յիշեսցուք և մի՛ զմեղս, և այնպէս հաճոյ լիցուք Աստուծոյ: Զի որ զայլոց զմեղս որոճիցէ և զիւր արդարութիւնսն, կրկին վնասի, զի առտի ի հպարտութիւն յօժարի, և անտի ի ծուլութիւն հաստանի: Զի յորժամ զմտաւ ածիցէ թէ այս անուն ոք մեղաւ, ապա և ինքն դիւրաւ մեղանչէ. յորժամ ի միտ դնիցէ՝ եթէ ուղղութիւնս ինչ արար, վաղվաղակի հպարտանայ: Իսկ որ զիւր առաքինութիւնսն մոռանայ և զմեղսն առաջի աչացն նկարիցէ, և զայլոց մեղսն չքննիցէ, այլ ընդ ուղղութիւնսն միայն նայիցի, բազում շահս շահիցի: Ի՞ւ և որո՞վ օրինակաւ. յորժամ տեսանիցէ՝ թէ ոք ուղղութիւնս ինչ արար, ընդ այն հայեցեալ ի նախանձ յորդորիցի. և յորժամ իմանայ թէ ինքն մեղաւ, խոնարհի և ի չափու ունի զանձն: Եւ արդ, եթէ զայս այսպէս առնիցեմք, կարեմք ապա և հանդերձելոց բարեացն հասանել. որոց լիցի մեզ ամենեցուն արժանի լինել Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով:



լինիցիս գոյաւոր հոգեւորօքն. կարո՞ղ էր առնել զնոսա անկարօտս. եցոյց եթէ վասն քո թոյլ ետ նոցա կարօտանալ, և այս եւս դարձեալ յայտնի է:

Զայս ամենայն իմացեալ՝ մի՛ ի բամբասանս, այլ ի բարերարութիւնս դարձցուք. մի՛ զայլոց չարիս քննեսցուք, այլ զմեր մեղսն ածցուք զմտաւ. զայլոց ուղղութիւնս յիշեսցուք, և զմեր մեղսն ածցուք զմտաւ և այնպէս հաճոյ լիցուք Աստուծոյ: Զի որ զայլոց զմեղս որոճիցէ և զիւր ուղղութիւնսն, կրկին վնասի. ուստի և ի հպարտութիւն յօժարէ, և ի հպարտութենէ ի ծուլութիւն հաստանի: Զի յորժամ զմտաւ ածիցէ թէ ոմն մեղաւ, և ինքն դիւրաւ մեղանչէ. յորժամ ի միտ դնիցէ՝ թէ ինքն ուղղութիւնս ինչ արար, վաղվաղակի հպարտանայ: Իսկ որ զիւր ուղղութիւնսն մոռացաւ, և զմեղսն առաջի աչաց դնիցէ, և զայլոց մեղսն չքննիցէ, այլ ընդ ուղղութիւնսն միայն նայիցի, բազում շահս շահի: Զիա՞րդ. յորժամ տեսանիցէ՝ թէ ոք ուղղութիւնս ինչ արար, ընդ այն հայեցեալ ի նախանձ յորդորիցի. և յորժամ իմանայցէ թէ ինքն մեղաւ, խոնարհի և ի չափու ունի զանձն: Եւ եթէ այսպէս առնիցեմք, կարեմք հասանել խոստացելոց բարութեանցն. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել ի Քրիստոս Յիսուս, ի տէր մեր, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն Սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Հ. ԵՓՐԵՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

*Շարայարելի*



digitised by A.R.A.R.@